

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Վիկտոր Դավաթյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ՝

1) հրապարակայնորեն արտահայտված վիրավորանքը և զրպարտությունը, որն անձի պատվին, արժանապատվությանը, գործարար համբավին վնաս է հասցնում, անհրաժեշտ է տարանջատել ոչ հրապարակայնորեն արտահայտված վիրավորանքից և զրպարտությունից՝ հրապարակայնորեն արտահայտված վիրավորանքի և զրպարտության համար քաղաքացիական օրենսգրքում նախատեսելով ավելի խիստ պատասխանատվություն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հրապարակայնորեն արտահայտ-

ված վիրավորանքը և գրպարտությունն էլ ավելի է նսեմացնում անձի պատիվն ու արժանապատվությունը, ավելի շատ վնաս է հասցնում անձի գործարար համբավին.

2) անձի պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի դիմաց փոխհատուցման վճարի չափը նվազեցնելը համարում ենք ոչ նպատակահարմար, քանի որ գործող քաղաքացիական օրենսգրքով (1087.1-ին հոդված) անձի պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի դիմաց փոխհատուցման ավելի համարժեք վճարի չափ է նախատեսված:

2. 2-րդ հոդվածով կատարվող փոփոխության 2-րդ մասում «անպարկեշտ» հասկացությունը կիրառելի չէ և նախագծի համատեքստում կարող է հանգեցնել իրավական անորոշության: Առավել ևս՝ «անպարկեշտ ձայն» արտահայտությունը հասկանալի չէ: Այդ առումով առաջարկում ենք նշված մասը խմբագրել:

Հարկ ենք համարում նշել, որ, համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի, գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Մինչդեռ, նշված սկզբունքը կիրառելի չէ պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման պահանջի վերաբերյալ գործերի նկատմամբ, քանի որ նշված դեպքերում փաստն ի սկզբանե վկայակոչել է պատասխանողը, և նա պետք է ապացուցի դրա իսկությունը, ինչն ամրագրված է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.1-ին հոդվածի 4-րդ մասում: Հետևաբար, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.1-ին հոդվածի 4-րդ մասի դրույթն անհրաժեշտ է պահպանել և ընդգրկել հոդվածի առաջարկվող նոր խմբագրությունում:

3. Օրենսդրական տեխնիկայի առումով անհրաժեշտ է՝

1) օրենքի նախագծի վերնագրից հանել «և լրացումներ» բառերը, քանի որ նախագծում լրացումներ չեն կատարվում:

2) օրենքի նախագծի 2-րդ հոդվածում «հետևյալ կերպ» բառերը փոխարինել «հետևյալ խմբագրությամբ» բառերով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջները:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքի նախագիծն ընդունելի կհամարի իր կողմից ներկայացված առաջարկությունների ընդունման դեպքում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Հրայր Թովմասյանը:

Օրենքի նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրվում է օրենքների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Ազգային ժողովի պատգամավորների հեղինակած «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

Եզրակացություն

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

Նախագծի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի <Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին> N 18-Ն որոշման համաձայն:

Նախագիծը սոցիալական պաշտպանության ոլորտում ունի չեզոք ազդեցություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ վերոնշյալ օրենքի նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում ազդեցություն չի նախատեսվում՝ հաշվի առնելով հետևյալ հանգամանքները.

1. Կարգավորման ենթակա հարաբերությունները հետևանքներ չեն առաջացնում տնտեսական աճի և ներդրումների ներգրավման վրա:
2. Կարգավորման ենթակա հարաբերությունները չեն ազդում «Գործարարությամբ զբաղվելը» համաթվի բաղադրիչների վրա:
3. ՓՄՁ զարգացման ինդեքսի հաշվարկման հիմքում ընկած ցուցանիշների ցանկը չի ներառում խնդրո առարկա փաստաթղթերի հետ կապված ցուցանիշները:

Հաշվի առնելով վերոնշյալ՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով ազդեցություն չհայտնաբերելու եզրակացություն: Նախագծով հստակեցվում են զրպարտություն և վիրավորանք հասկացությունները, կարգավորվում են անձի պատվի և արժանապատվության ապահովման հարաբերությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում
փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում
կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) մրցակցության բնագավառում ազդեցության գնահատման գործընթացի նախնական փուլում պարզվել է՝

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա զգալի ազդեցություն չհայտնաբերվելու եզրակացություն:

ԱՃԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վ. Դալլաքյանի կողմից օրենսդրական նախաձեռնությամբ ներկայացված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) նախագծի ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանում:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանում:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

Եզրակացություն

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը՝ ընդունվելու կամ չընդունվելու դեպքում, ՀՀ պետական բյուջեի մուտքերի, ելքերի, ինչպես նաև բյուջետային բնագավառում քաղաքականության փոփոխմանը չի հանգեցնում:

**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում
փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ**

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում
փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 19-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Անձի պատիվը, արժանապատվությունը, գործարար համբավը ենթակա են պաշտպանության այլ անձի կողմից արտահայտված վիրավորանքից եւ զրպարտությունից՝ սույն օրենսգրքով եւ այլ օրենքներով սահմանված դեպքերում ու կարգով:»:

Հոդված 2. Օրենսգրքի 1087.1 հոդվածը շարադրել հետեւյալ կերպ.

«Հոդված 1087.1. Պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը եւ պայմանները

1. Անձը, որի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորել են վիրավորանքի կամ զրպարտության միջոցով, կարող է դիմել դատարան՝ վիրավորանք հասցրած կամ զրպարտություն կատարած անձի դեմ:

2. Վիրավորանքը անպարկեշտ խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորելու նպատակով կատարված արտահայտությունն է:

Անպարկեշտ արտահայտությունը տվյալ իրավիճակում եւ իր բովանդակությամբ կարող է չհամարվել վիրավորանք, եթե այն հիմնված է ստույգ փաստերի վրա (բացառությամբ բնական արատների) կամ պայմանավորված է գերակա հանրային շահով:

3. Չրպարտությունը անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորելու նպատակով ակնհայտ սուտ փաստացի տվյալներ ներկայացնելն է:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված փաստացի տվյալները ներկայացնելը չի համարվում զրպարտություն, եթե՝

1) դրանք տեղ են գտել մինչդատական կամ դատական վարույթի ընթացքում վարույթի մասնակցի կողմից քննվող գործի հանգամանքների վերաբերյալ կատարված արտահայտությունում կամ ներկայացրած ապացույցներում.

2) դա տվյալ իրավիճակում եւ իր բովանդակությամբ պայմանավորված է գերակա հանրային շահով, եւ եթե փաստացի տվյալները ներկայացրած անձն ապացուցի, որ ողջամտության սահմաններում ձեռնարկել է միջոցներ՝ պարզելու դրանք

ճշմարտությունը եւ հիմնավորվածությունը, ինչպէս նաեւ հավասարակշռված եւ բարեխղճորեն է ներկայացրել այդ տվյալները.

3) այն բխում է զրպարտության ենթարկված անձի կամ նրա ներկայացուցչի հրապարակային ելույթից կամ պատասխանից կամ նրանցից ելնող փաստաթղթից:

5. Անձը վիրավորանքի կամ զրպարտության համար պատասխանատվություն չի կրում, եթե իր արտահայտած եւ(կամ) տարածած փաստացի տվյալները լրատվական գործակալության տարածած տեղեկատվության, ինչպէս նաեւ այլ անձի արտահայտության, այլ անձի ներկայացրած եւ(կամ) տարածված տեղեկատվության, պաշտոնական փաստաթղթերի, լրատվության այլ միջոցի կամ հեղինակային որեւէ ստեղծագործության բովանդակած տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ վերարտադրությունն են, եւ դա տարածելիս հղում է կատարվել տեղեկատվության աղբյուրին (հեղինակին):

6. Վիրավորանքի դեպքում անձը կարող է դատական կարգով պահանջել հետեւյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը՝

1) հրապարակայնորեն ներողություն խնդրել: Ներողություն խնդրելու ձեւը սահմանում է դատարանը.

2) եթե վիրավորանքը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվության այդ միջոցով լրիվ կամ մասնակի հրապարակել դատարանի վճիռը: Հրապարակման եղանակը եւ ծավալը սահմանում է դատարանը.

3) սահմանված նվազագույն աշխատավարձի մինչեւ 500-ապատիկի չափով փոխհատուցում վճարել:

7. Զրպարտության դեպքում անձը կարող է դատական կարգով պահանջել հետեւյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը՝

1) եթե զրպարտությունը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվության այդ միջոցով հրապարակայնորեն հերքել զրպարտություն համարվող փաստացի տվյալները եւ (կամ) հրապարակել դրանց վերաբերյալ իր պատասխանը: Հերքման ձեւը եւ պատասխանը հաստատում է դատարանը՝ ղեկավարվելով «Ձանգվածային լրատվության մասին»² Հայաստանի Հանրապետության օրենքով.

2) եթե նշված տեղեկությունները պարունակվում են կազմակերպությունից ելնող փաստաթղթում, ապա նման փաստաթուղթը պետք է փոխարինվի կամ հետ կանչվի:

3) սահմանված նվազագույն աշխատավարձի մինչեւ 800-ապատիկի չափով փոխհատուցում վճարել:

9. Եթե վիրավորանքը կամ զրպարտությունը տարածելիս հղում չի կատարվել տեղեկատվության աղբյուրին (հեղինակին), կամ տեղեկատվության աղբյուրը (հեղինակը) հայտնի չէ, կամ լրատվական գործունեություն իրականացնողը, օգտվելով տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու իր իրավունքից, չի հայտնում հեղինակի անունը, ապա փոխհատուցման պարտավորությունը կրում է վիրավորանքը կամ

գրպարտությունը տարածողը, իսկ եթե այն ներկայացվել է լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվական գործունեություն իրականացնողը:

10. Անձը չի կարող օգտվել սույն հոդվածի 6-րդ եւ 7-րդ կետերով սահմանված պաշտպանության միջոցներից, եթե նա մինչեւ դատարան դիմելը «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պահանջել է հերքում եւ (կամ) իր պատասխանի հրապարակում, եւ լրատվական գործունեություն իրականացնողը կատարել է այդ պահանջը:

11. Սույն հոդվածի 6-րդ եւ 7-րդ կետերով սահմանված փոխհատուցման չափը սահմանելիս դատարանը հաշվի է առնում կոնկրետ գործի առանձնահատկությունները, ներառյալ՝

1) վիրավորանքի կամ գրպարտության եղանակը եւ տարածման շրջանակը.

2) վիրավորողի կամ գրպարտողի գույքային դրությունը:

Սույն հոդվածի 6-րդ եւ 7-րդ կետերով նախատեսված դեպքերում փոխհատուցման չափը սահմանելիս դատարանը չպետք է հաշվի առնի վիրավորանքի կամ գրպարտության հետեւանքով պատճառված գույքային վնասը:

12. Սույն հոդվածով սահմանված կարգով իրավունքի պաշտպանության հայց կարող է ներկայացվել դատարան՝ վիրավորանքի կամ գրպարտության մասին անձին հայտնի դառնալու պահից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան վիրավորանքի կամ գրպարտության պահից վեց ամսվա ընթացքում: Մամուլով տարածված վիրավորանքը կամ գրպարտությունը համարվում է հրապարակման օրը հայտնի դարձած»:

Հոդված 3. Օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտության

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումը նպատակ ունի ապահովել անձի պատվի եւ արժանապատվության ապահովումը, հստակեցնել զրպարտություն եւ վիրավորանք հասկացությունները, զրպարտության եւ վիրավորանքի համար պատասխանատու անձանց շրջանակը եւ համարժեք դարձնել պատասխանատվությունը:

1. ՀՀ Սահմանադրության՝

- 14-րդ հոդվածի համաձայն՝ մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում եւ պաշտպանվում է պետության կողմից,

- 3-րդ հոդվածի համաձայն՝ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները եւ ազատությունները բարձրագույն արժեքներ են: Պետությունն ապահովում է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

ՀՀ ԱԺ-ն, սակայն, մինչ օրս ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը չի լրացրել բարոյական վնասի փոխհատուցման մասին օրինադրույթով (հոդվածով)՝ չապահովելով մարդու արժանապատվության պաշտպանությունը, իսկ 18.05.2010թ-ին ընդունված ՀՀ քաղաքացիական, քրեական եւ քրեական դատավարության օրենսգրքերում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին օրենսդրական փաթեթն (այսուհետ՝ օրենսդրական փաթեթ) էլ վերաբերում է վիրավորանք եւ զրպարտություն հանցակազմերն ապաքրեականացնելուն:

Օրենսդրական փաթեթով, սակայն, անձինք գրկվել են Սահմանադրությամբ երաշխավորված իրենց պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը ոչ հրապարակային վիրավորելու եւ զրպարտելու դեպքերում իրավական ու դատական պաշտպանության հնարավորությունից, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19 եւ 1087.1 հոդվածները անձի պատիվը, արժանապատվությունը եւ գործարար համբավը ոչ հրապարակային արատավորելու համար պատասխանատվության որեւէ ձեւ (այդ թվում ոչ նյութական) չեն սահմանում, ինչն ուղղակիորեն հակասում է Սահմանադրության 3 եւ 14 հոդվածներին:

Նման հակասահմանադրական բացը լրացնելու համար էլ անհրաժեշտ է կատարել առաջարկվող փոփոխությունները, որոնք քաղաքացիաիրավական պատասխանատվություն են սահմանում անձի պատիվը, արժանապատվությունը եւ գործարար համբավը ոչ միայն հրապարակային արատավորելու դեպքերի համար:

2. Որպես օրենսդրական փաթեթի ընդունման հիմնավորում, ներկայացվել էր, որ «ՀՀ քրեական օրենսգրքի 135-րդ եւ 136-րդ հոդվածներով նախատեսված է պատասխանատվություն զրպարտության եւ վիրավորանքի համար, սակայն խոսքի ազատության որեւէ դրսեւորման կապակցությամբ քրեական պատասխանատվությունը միջազգային ժողովրդավարական չափանիշներով չի համարվում համաչափ: Նկատի ունենալով սույն հանգամանքը առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 135-րդ եւ 136-րդ հոդվածները ...»:

Ի հակառակ վերը նշված հիմնավորման, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածում զրպարտություն եւ վիրավորանք հասկացություններից հանվել են արտահայտությանը վիրավորանքի եւ զրպարտության որակ տվող այնպիսի հատկություններ, ինչպիսիք են «անպարկեշտ»-ը վիրավորանքի դեպքում եւ «ակնհայտ սուտ»-ը զրպարտության դեպքում:

Արդյունքում ստեղծվել է մի իրավիճակ, երբ ցանկացած փաստական անճշտություն կամ գնահատող կարծիք կարող է որակվել որպես զրպարտություն կամ վիրավորանք, այն դեպքում, երբ այդ հարաբերություններն արդեն իսկ կարգավորված են «Չանզվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով:

Նման վիճակը օրենքի անորոշության հետեւանք է, ինչը հակասում է Սահմանադրության 1-ին հոդվածով երաշխավորված իրավական պետության բնույթին:

Բացի այդ, ՀՀ քրեական օրենսգրքի 135 հոդվածը զրպարտության համար անձի սեփականության իրավունքի միջամտություն (տուգանք) էր նախատեսում մինչեւ 1.000.000 դրամի չափով, իսկ 136 հոդվածը՝ վիրավորանքի համար՝ մինչեւ 800.000 դրամի չափով, ինչը փաթեթի ընդունման հիմնավորման մեջ ներկայացվել էր որպես անհամաչափ պատասխանատվություն, սակայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածով զրպարտության եւ վիրավորանքի համար պատասխանատվություն սահմանվեց համապատասխանաբար մինչեւ 1.000.000 եւ 2.000.000 դրամի չափով, ինչը տուգանքի ձեռով քրեական պատասխանատվությունից շատ ավելի մեծ գումարի պատասխանատվություն է եւ էլ ավելի անհամաչափ միջամտություն է Սահմանադրությամբ երաշխավորված անձի սեփականության իրավունքին:

Օրենսդրական փաթեթի հիմնավորումներում նշված նման հակասահմանադրական շեղումները եւ իրավակիրառ պրակտիկայում դրանց հետեւանքները վերացնելու համար էլ առաջարկվում է որոշակիացնել «վիրավորանք» եւ «զրպարտություն» հասկացությունները, դրանց մեջ ներառելով համապատասխանաբար «անպարկեշտ» եւ «ակնհայտ սուտ» եզրույթները, ինչպես նաեւ վիրավորանքի համար փոխհատուցում սահմանել մինչեւ 500.000, իսկ զրպարտության համար մինչեւ 800.000 դրամի չափով, ապահովելու համար վիրավորանքի եւ զրպարտության համար, որպես պատասխանատվություն սեփականության իրավունքին միջամտության համաչափությունը:

3. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի գործող տարբերակի 4-րդ եւ 12-րդ մասերի իրավակարգավորումը առաջարկվող նախագծով դադարեցվել է, քանի որ Արտիկլ 19 կազմակերպության «Սահմանել զրպարտությունը» հրապարակման 7-րդ սկզբունքում ամրագրված է, որ տեղեկությունները կեղծ լինելը ապացուցելու պարտականությունը պետք է կրի հայցվորը (տես՝ օրենսդրական փաթեթի տեղեկանք-հիմնավորումը), իսկ 12-րդ մասի իրավակարգավորումն արդեն իսկ առկա է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17 հոդվածում եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68 հոդվածում:

4. Սույն նախագծում հստակեցվել են «ներկայացնել» եւ «տարածել» հասկացությունները:

Օրինագիծը մշակվել է փաստաբան Կարեն Մեժլումյանի կողմից, որը ինձ առաջարկել է հանդես գալ համապատասխան օրենսդրական նախաձեռնությամբ: